Հարգելի՛ ընթերցող,

Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման (ԱԵԳՄՄ) նախագիծ հանդիսացող ***Արցախի Էլեկտրոնային Գրադարանի*** կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել ԱՆՎՃԱՐ:

Էլեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄՄ-ի թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

Շնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին՝ աշխատանքների էլեկտրոնային տարբերակները կայքում տեղադրելու թույլտվության համար:

Уважаемый читатель!

На сайте ***Электронной библиотеки Арцаха***, являющейся проектом **Объединения Молодых Учёных и Специалистов Арцаха** (ОМУСА), размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать БЕСПЛАТНО.

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

The Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA) presents its project - ***Artsakh E-Library*** website, where you can find and download for FREE scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

Մեր տվյալները – Наши контакты - Our contacts

Site: http://artsakhlib.am/
E-mail: info@artsakhlib.am
Facebook: https://www.facebook.com/www.artsakhlib.am/
ВКонтакте: https://vk.com/artsakhelibrary
Twitter: https://twitter.com/ArtsakhELibrary

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ

«Ազգ եւ ժառանգություն»
Համահայկական երիտասարդական գիտաժողով

Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն
Ստեփանակերտ
սեպտեմբեր 26-30, 2006թ.

ՀՀ մշակույթի եւ երիտասարդության հարցերի նախարարություն
ԼՂՀ կրթության, մշակույթի եւ սպորտի նախարարություն
ՀՀ «Երիտասարդական միջոցառումների կազմակերպման կենտրոն» ՊՈԱԿ
ԼՂՀ մշակույթի եւ երիտասարդության պալատ

«Ազգ եւ ժառանգություն»
համահայկական
երիտասարդական
գիտաժողով

Սեպտեմբեր 26-30 2006 թ.
Ստեփանակերտ

Գիտաժողովը նվիրվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հռչակման 15-ամյակին

Խմբագրական խորհուրդ

Ս. Խանյան -բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, գիտության վաստակավոր գործիչ
Վ. Բալայան- պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ
Ա. Մխիթարյան – հոգեբանական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր
Շ. Ասրյան- տնտեսագիտության ամբիոնի դասախոս
Լ. Բեգլարյան- տնտեսագիտության ամբիոնի դասախոս

Գրքում զետեղված են սեպտեմբերի 26-30-ը տեղի ունեցած Համահայկական երիտասարդական գիտաժողովի զեկուցումները

ծալքերում, գծագրվում է պապի համբերությամբ ծանրացած ախ ու հառաչից:

Առաջին հայացքից զսպված, ապա կուտակումից ահագնացող ցավ է ամբարված 363 ականատես վկաների ցուցմունքնամակներում, որոնք ժամանակին տեղ չեն հասել, բայց, հեղինակի համոզմամբ, կարող են առաքվել ցանկացած հասցեով և գտնել իրենց իսկական հասցեատերը: Քանի որ դրանք բողոքի հայցեր են՝ ուղղված քաղաքակիրթ հանրությանը՝ արդար դատաստանի օրը տեսնելու սպասումով և հույսով լի: Կգա օրը, այլապես քանի դար էլ անցնի մորթվող մանուկների ճիչեր են լսվելու, կացնակիր ու յաթաղանակիր ոճրագործների գազանաբարո աղմուկ-մռունչ-աղաղակն է մարդկանց ականջը պատռելու, արյան հոտ է գալու:

Արեն Մակյան
«Արքունության կրակ» ԵԿ

Ինտեգրում վաղեմի քրիստոնեական արժեքների ու սկզբունքների մեջ

Անցյալ աթեիզմի, կռապաշտ և սնոտիապաշտ տարիները խոր հետք են թողել մեր հասարակության, ներկայիս սերնդի գիտակցության և աշխարհայացքի ձևավորման վրա՝ արմատախիլ անելով կարևոր հոգևոր արժեքներ: Այսօր շատերի համար, մանավանդ երիտասարդների շրջանում, հավատքը, աղոթքը, Աստծո խոսքը, աստվածապաշտ կյանքը համարվում են հետամնաց և պառավական:

Մենք ապրում ենք քրիստոնեական երկրում, դարեր շարունակ մեր ազգը կոչվել է «քրիստոնյա», բայց եթե անկեղծ լինենք, այսօր այդ անվանումը լոկ պիտակ է մեր ազգի վրա, քանի որ ոտնահարված են Աստծո խոսքը, քրիստոնեական արժեքները և հավատքի հիմնասյուները:

Այսօր հաճախ ես հանդիպում մարդկանց, ովքեր ասում են՝ «...հավատում ենք, ինչպե՞ս չենք հավատում, ճիշտ է՝ Աստվածաշունչ չենք կարդում... ժամանակ չունենք կամ էլ չենք հասկանում, բայց հավատում ենք», թե ո՞ւմ են հավատում կամ թե ինչի՞ն Աստված գիտի: Իսկ ոմանց կարծիքով մեր ազգի դժվարությունների պատճառը քրիստոնեությունն ընդունելն էր. ասել է, թե ավելի լավ կլիներ, որ մենք հեթանոս մնայինք, ոմանք էլ նույնիսկ հանդգնում են ենթադրել, իբր

ավելի ճիշտ կլիներ, որ մենք էլ մահմեդական դառնայինք: Էլ չխոսենք այն մասին, որ մեր հայրենակիցների մի զգալի մասը, բացարձակ անտեղյակ լինելով, թե իրականում ինչ է իրենից ներկայացնում քրիստոնեությունը, անձնատուր է եղել սնոտիապաշտության, կախարդության, կռապաշտության, ինչպես նաև արևելյան, հինդուիստական ամենատարբեր մեդիտացիաների, ուսմունքների և մոլորությունների:

Նախկին սերունդները՝ մեր հայրերը, եղել են աստվածաճանաչ, հոգևոր գրագետ մարդիկ, ապրել են աստվածապաշտ կյանք, սակայն եկեք խոստովանենք՝ այսօր շատ չեն աստվածաճանաչ, սուրբգրային ճշմարտությունների և սկզբունքների մեջ գրագետ մարդիկ, ովքեր կասեն՝ «մենք գիտենք ում ենք հավատում և ինչու ենք հավատում»: Այդ առումով այսօր մենք կարիք ունենք վերադառնալ արմատներին, մեր հայրերի պաշտած Աստծուն, Աստծո կենդանի և հավիտենական խոսքին, որովհետև հավատը լսելուց է...

Յուրաքանչյուր ոք հավատում է ինչ-որ բանի: Այն, ինչին մենք հավատում ենք, ձևավորում է մեր կյանքը, վարմունքները և մեր ապագան: Այն, ինչին մենք հավատում ենք, դառնում է մեր համոզմունքը և ձևավորում մեր կյանքի արժեքների համակարգը: Դրա համար կարևոր է, որ մեր հավատքի աղբյուրը լինի մաքուր, ճշմարիտ և անաղարտ:

Ցավոք սրտի, միշտ չէ, որ մարդիկ հավատում են ճշմարտությանը: Հաճախ ինչ-որ մեկը մի բան է ասում, ոմանք հարում են դրան, և դա դառնում է «ճշմարտություն»:

Հանցագործը հավատում է, որ կմնա անպատիժ...

Մեկը, որ կազինոյում վատնում է իր փողերը, հավատում է, որ կտանի, իսկ երբ մի օր կորցնում է ամեն բան և լավագույն դեպքում հայտնվում փողոցում, զարմանում է, թե ինչու այդպես ստացվեց...

Հոմոսեքսուալիստները հավատում են, որ լավ բան են անում և ազատ են այդ անելու և հավակնում են մարդու իրավունքների պաշտպանությանը, որովհետև երբեք չեն լսել ու հավատացել, որ դա պղծություն է և Աստծո՝ Արարչի կողմից դրված սկզբունքների, կյանքի նորմաների կոպիտ խախտում :

Աստծո հետ մեզ կապում է հավատքը, իսկ հավատքը Աստծո խոսքը լսելուց է: Սկզբում այդ խոսքը կառուցում է մեր հավատքը, հետո այդ հավատքը կառուցում է մեր կյանքը: Աստծո խոսքն ասում է, որ «Արդարը հավատքով է ապրում»: Ինչպիսի հավատք մենք կառուցենք, այդ հավատքը մեզ համար համապատասխան կյանք կկառուցի:

Եթե այդ հավատքը հենված է նախապաշարումների, ունայնությունների և սնոտիապաշտությունների վրա, մեր կյանքը կազմված կլինի նախապաշարումներից, ունայնություններից և սնոտիապաշտություններից: Բայց եթե մեր հավատքը հենված է Աստծո թանկարժեք խոստումների և ճշմարտությունների վրա, ապա մեր կյանքը ուղղված և առաջնորդված կլինի Աստծո խոստումներով և Աստծո կամքով:

Աստվածաշունչը հնություն չէ, այն հավիտենական է, ուրեմն՝ նաև արդիական: Այն Աստծո ձայնն է՝ ուղղված մեզ, որի կարիքը մենք ամենքս օդի պես ունենք այսօր: Աստված խոսում է մեզ հետ այդ գրքի միջոցով: Որպես մի կենսատու փարոս, այն ցրում է մարդկային սրտի խավարը և լուսավորում ողջամիտ կյանքի ուղին: Ինչպես ասում է աշխարհի ամենաիմաստուն մարդկանցից մեկը՝ Սողոմոն իմաստունը՝ առանց Աստծո Խոսքի, Աստծո ձայնի ժողովուրդը վայրենանում է, մոլորվում:

Ուր որ հավատում է երկիրը, նա էլ որոշում է այդ երկրի ապագան, ում որ հավատում է ժողովուրդը, նա էլ որոշում է այդ ժողովրդի ճակատագիրը:

Երանելի է այն ժողովուրդը, որի Աստվածը Տերն է: Ի դեպ, ժողովուրդը ամբոխ չէ: Ամբոխը չունի Աստված: Ամբոխից խլել են իր Աստծուն: Ամբոխը նախկին ժողովուրդն է, որից արմատախիլ են արել հավատքը: Ամբոխը այն մարդիկ են, որոնք զուրկ են արժանապատվությունից և իդեալներից:

Եվ արքունությունը այն պրոցեսն է, երբ Աստված ամբոխը դարձնում է ժողովուրդ:

Մենք հավատում ենք, որ մեր ազգը ուղղակի ամբոխ չէ, այլ Աստծո ժողովուրդ: Ամբոխը կորսված մարդիկ են, մարդիկ առանց Աստծո, առանց օրենքի, առանց սկզբունքների: Բայց ժողովուրդը ունի արժեքներ, ունի ճշմարտության վրա հենված կյանքի համոզմունքներ և ունի ձայն:

Մենք հավատում ենք, որ Աստված մեր երկրի, մեր ժողովրդի համար ունի առանձնահատուկ ծրագիր: Կարծում եմ պատահական չէր, որ Նոյան տապանն իջավ Արարատի վրա, պատահական չէր, որ մեր երկիրը առաջիններից մեկն էր, որտեղ քրիստոնեությունը պաշտոնական ընդունելություն գտավ:

Մենք կարիք ունենք, որ Աստծո խոսքը թափանցի մեր հասարակության բոլոր շերտերը, որպեսզի ունենանք իսկապես քրիստոնյա հասարակություն, ողջամիտ և առաքինի երիտասարդութ-

յուն, հոգևոր առողջ դատողությամբ մտավորականություն, Տեր Հիսուսից կախում ունեցող, Սուրբ Հոգով և իմաստությամբ լցված անաչառ կառավարություն. իշխանություններ, օրինապահ, իրավական պետական և ղեկավար մարմիններ:

Աստծո խոսքը ասում է. «Ամեն ժողովուրդ արժանի է իր թագավորին»: Հնարավոր չէ արդար, օրինական երկրում լինի անօրեն, անարդար կառավարություն, և հակառակը՝ հնարավոր չէ անօրեն երկրում ունենալ արդար թագավոր, կառավարություն:

Աստծո խոսքն ասում է. «Արդարությունը կբարձրացնի մի ազգ, իսկ մեղքը անարգանք է ժողովրդին»:

Մենք հավատում ենք, որ Ավետարանը, Աստծո խոսքը, իրական քրիստոնեական արժեքները կբարձրացնեն մեր ազգը, մեր երկիրը և մեր ժողովրդին...

Որպեսզի Աստծո կենդանի և հավիտենական խոսքն ընկած լինի մեր պետականության հիմքում...

Որ մեր սահմանադրությունը հիմնված լինի Աստծո ճշմարտությունների և սկզբունքների վրա, և մեր երկրում ամենաբարձր տեղում լինի Աստծո ծայնը և Նրա հեղինակությունը:

Այսինքն՝ Տեր Հիսուսը մեր երկրում լինի տերերի Տեր և թագավորների Թագավոր...

Լուսինե Մնացականյան
«Սգատ Հայք» ԲՀԿ

Հայերենի դասական ուղղագրության վերականգնումը պետք է համայն հայությանը

Ողջունելով ներկա գտնվողներին ու շնորհակալություն հայտնելով գիտաժողովի կազմակերպիչներին, ուզում եմ խոսել մի հարցի շուրջ, որը ներառված չէր գիտաժողովի թեմաների շարքում. սակայն, ոչ պակաս հրատապ, կարևոր ու արդիական հարց է ծառացած ազգային խնդիրներով ապրող ու դրանով մտահոգված երիտասարդության առջև ու առավել ևս այն դեռահասների ու պատանիների որոնք պիտի փոխարինեն մեզ:

Արդի ժամանակաշրջանում պատմության մատուցած հերթական անակնկալներն ու դժվարությունները, անհամար պրոբլեմները իհարկե կան ու հրատապ լուծում են պահանջում: Շրջադարձային այս փուլում աշխարհաքաղաքական խրթին վայրիվերումների հորձանուտում դի-

Ֆորմատ 84x60/8, ծավալը՝ 10.5 տպագրական մամուլ,
տպաքանակը՝ 300, թուղթ՝ օֆսեթ:
Տպագրությունը՝ «ՊՈԼԻԳՐԱՖ» ՓԲԸ
Ստեփանակերտ, Վ.Մամիկոնյանի փող., 21,
հեռ 4-89-96, 4-89-97, 4-89-98,

ПОЛИГРАФ